Արձանագրություն N 2
ՀՀԲՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 ծածկագրով Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

31.05.2018 թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սարգսյանց
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մարտիրոսյան /գնահատող/
Կ. Երիցյան /գնահատող/
Ա. Քոչարյան /բացող/
Վ. Առաքելյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀԲՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Ա.Սարգսյանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2018 թվականի մայիսի 26-ին հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 2018 թվականի մայիսի 29-ին ժամը 11:30-ին:

բ) Գնման ընթացակարգի նախահաշվային արժեքը կազմում է 9 804 725 (ինը միլիոն ութ հարյուր չորս հազար յոթ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Էլ. փոստի հասցե*	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	<<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ	texdraft@mail.ru	1 455 000	-	1 455 000
2	<<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ	nmuradyan55@mail.ru	5 100 000	-	5 100 000
3	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	ekspertizaproektov@mail.ru	5 830 000	1 166 000	6 996 000

դ) Ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 22-րդ ենթակետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

2. Տեղեկություններ ՀՀԲՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա.Սարգսյանց)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ	բավարար
2	<<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ	բավարար
3	<<<< նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա.Սարգսյանց)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց.
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) հարցում ներկայացնել գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած <<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացնելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. ՀՀԲՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա.Սարգսյանց)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Կոմիտեի կողմից տեղեկատվության և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2018 թվականի հունիսի 7-ին ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ա. Սարգսյանց

Անդամ՝ _____ Ն. Մարտիրոսյան

_____ Կ. Երիցյան

_____ Ա. Քոչարյան

_____ Վ. Առաքելյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան